ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

4 ապրիլի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

48
(2714)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԻՆՉՊԵՏ՞Ս Է ՏԱՐԱԾՎԵԼ ՏԵՍԱՆՅՈՒԹԸ

Ինչպես հայտնի է, Ազգային ժողովի պետահիրավական հանձնաժողովի մարտի 31-ի նիստի ժամանակ միջադեպ էր տեղի ունեցել հանձնաժողովի նախագահ, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր, ՀՅ Դաշնակցության անդամ Միհեր Սահակյանի միջեւ:

Մենք գրել էինք, որ վիճաբանությունը եղել է այն բանից հետո, երբ փակ նիստի ժամանակ ընդդիմադիր պատգամավորները, հանձին «Հայաստան» խմբակցության քարտուղար Արծվիկ Մինասյանի, խոսել է Հռոմի կոնվենցիայի մասին, ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինին ձերբակալելուց՝ ասելով, թե այս իշխանությունները կրկին փորձանք են բերում: Այս խոսքերին արձագանքել է ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանը, հայտարարել, թե ՀՅԴ-ն է փորձանք բերել, ինչին հետեւել են ընդդիմադիր պատգամավոր Միհեր Սահակյանի խոսքերը. «Մի՛ գոռա, ձայնդ մի՛ բարձրացրու»: Վարդանյանը հակադարձել է. «Ում վրա ուզեմ, գոռալու եմ, ինչ ուզեմ, անելու եմ»: Վարդանյանը նետվել է դեպի Միհեր Սահակյանը ու ինչ-որ բան ասել, վերջինս էլ հարվածել է:

Եվ, ահա, այդ դեպքից ժամեր անց Ազգային ժողովի շենքում գործող տեսանկարահանող սարքերի ձայնագրությունները տարածվեցին համացանցում եւ սոցիալական կայքերում: Ընդ որում՝ այդ տեսաձայնագրություններն առաջինը տարածել էին իշխանության ներկայացուցիչներին պատկանող լրատվական կայքերը:

Ուշագրավ է, սակայն, որ ամենաակտիվն այս հարցում եղել է medianews-ը, որի հիմնադիրը վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տարոն Չախոյանն է, այսինքն՝ նա օգտագործել է իր լծակները՝ այդ տեսանյութերը ունենալու եւ առաջինը տարածելու համար:

ArmLur.am-ը փորձել էր հենց Տարոն Չախոյանից հասկանալ, թե ինչպես է այդ տեսանյութն առաջինը հայտնվել իրեն պատկանող լրատվամիջոցում, սակայն վերջինս հայտարարեց. «Շատ բան են կապում իմ անվան հետ, դա դեռ չի նշանակում, որ ես կապ ունեմ»: Իհարկե, նա փորձում է հերքել թե՛ իր կապ ունենալը, թե՛, որպես պաշտոնյա, իր լծակներն օգտագործելով այդ տեսանյութը ստանալու հանգամանքը. փաստերն ինքնին խոսուն են:

Հավելենք, որ այս հարցով Ազգային ժողովում ծառայողական քննություն է սկսվել՝ հասկանալու համար, թե ինչպես են տեսախցիկների տեսագրությունները տարածվել: Այս մասին մեզ հայտնել էր ԱԺ լրատվական ծառայության պետ Լաուրա Անտոնյանը: ArmLur.am-ը հետամուտ կլինի այս հանգամանքին՝ պարզելու, թե ՊՊԾ ենթակայությամբ կառավարվող տեսախցիկների նկարահանածը ինչպես հանրային դաշտ մտավ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանն արդեն խորհրդարան է ներկայացրել Հայաստանի Հանրապետության դատախազության նախորդ տարվա գործունեության մասին հաղորդումը: Այն բաղկացած է 164 էջից: Այս հաղորդումը պետք է քննարկվի ԱԺ լիագումար նիստում, սակայն մինչ այդ հանձնաժողովի նիստում կքննարկվի: Եվ այսպես, «ԱԺ կանոնակարգ» օրենքի 126-րդ հոդվածում սահմանված է, որ գլխավոր դատախազի հաղորդումը խորհրդարանի համապատասխան հանձնաժողովում քննարկվում է այն ներկայացնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, իսկ, ահա, երկամսյա ժամկետում՝ խորհրդի սահմանած օրը, քննարկվում է Ազգային ժողովի հերթական նիստերում: Այսինքն՝ սպասվում է, որ Աննա Վարդապետյանը խորհրդարան կգա եւ կներկայացնի տարեկան հաղորդումը մինչեւ ամառ, քանի որ նա կարող է դա անել միայն հերթական նիստերի ժամանակ: Արտահերթ նստաշրջանում տարեկան հաղորդումը չի կարող քննարկվել: Եւ ուշագրավ է, որ Վարդապետյանը ներկայացնելու է Արթուր Դավթյանի օրոք կատարված 1 տարվա աշխատանքը:



ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական ժողովի արտահերթ նիստում այսօր կքննակվի ՀՀ ՄԻՊ թեկնածուի հարցը: Ինչպես հայտնի է, օմբուդսմենի թեկնածուները երկուսն են՝ Անահիտ Մանասյան եւ Էդգար Ղազարյան: Հանձնաժողովի անդամներն իրենց քվեարկությամբ պետք է ընտրեն թեկնածուներից մեկին եւ նրան առաջադրեն ԱԺ-ին: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ն միասնական որոշում ունի արդեն այս հարցում: Բանն այն է, որ ՔՊ-ականներն ԱԺ մարդու իրավունքների եւ հանրային հարցերի մշտական ժողովում 1 ներկայացուցչով ավելի շատ են, ուստի մտադիր են միասնական դեմ քվեարկել Ղազարյանի թեկնածությանը, որպեսզի գլխադասային հանձնաժողովը ԱԺ-ին առաջադրի իրենց թեկնածուին՝ Անահիտ Մանասյանին: Մեր տեղեկություններով՝ ՔՊ-ականներն արդեն «սցենար» են մշակել, որ պետք է իբրեւ պատճառաբանություն բերեն Ղազարյանի խիստ քաղաքականացվածությունը, մտադիր են հիշեցնել նրա նախկինում արած հայտարարությունները եւ գրառումները, որտեղ քննադատում է գործող իշխանություններին՝ ցույց տալու համար, որ Էդգար Ղազարյանը չի համապատասխանում չափորոշիչներին եւ չի կարող «անաչառ» օմբուդսմեն լինել: Իսկ թե որքանով է իրենց թեկնածուն (որը հանրության համար ոչ հայտնի դեմք է) համապատասխանում Սահմանադրությամբ ՄԻՊ-ի համար սահմանված չափորոշիչներին, ՔՊ-ականներն իրենք էլ թերեւս այս հարցի պատասխանը չունեն: Կառավարությունից պարտադրել են կողմ քվեարկել, ուրեմն կքվեարկեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քննչական մարմիններում վարչության պետերի ազատման շարք է սպասվում առաջիկայում: Բանն այն է, որ դատախազներն ու քննիչները լուրջ բախումների մեջ են, ու լարվածությունն այն աստիճան է խորացել, որ անգամ ցանկացած քրեական վարույթի շրջանակներում, երբ նախատեսվում է հանդիպում քննիչների ու դատախազների միջեւ, նրանք չեն հանդիպում, իսկ գրավոր փաստաթղթերում էլ միմյանց հասցեին ընդհուպ վիրավորանքներ են շարադրում: Ըստ իրավապահ համակարգում տարածված լուրերի՝ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը «պատերազմ» է հայտարարել եւ՛ Քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին, եւ՛ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահ Սասուն Խաչատրյանին: Ըստ իրավապահ համակարգում տարածված լուրերի՝ այս ամենի նպատակը նրանց նոր անձանցով փոխարինելն է: Թե ովքեր են հավանական թեկնածուները քննչական մարմինների, առայժմ մեզ պարզել չհաջողվեց: Կհաջողվի արդյոք Աննա Վարդապետյանին հասնել բարձրաստիճան պաշտոնանկություններին, թե ոչ՝ ցույց կտան զարգացումները: Ակնհայտ է, որ քննիչների ու դատախազների հարաբերություններն անքան են լարվել, որ լուրջ գործերով քննություն իրականացնող վարչության պետեր պատրաստվում են ազատման դիմում գրել. նրանց չի պահում անգամ մեկ միլիոն եւ ավելի աշխատավարձը:

ՈՉ ՀԱՄԱՉԱՓ

ԹՇՆԱՄԻՆ ԱՌԱՋ Է ԵԿԵԼ

Հակառակորդը վերջին օրերին առաջխաղացման փորձեր է արել ոչ միայն Արցախում, այլ նաեւ Սյունիքի մարզի Տեղ գյուղի հատվածում: Ըստ տեղեկությունների՝ հակառակորդն առաջ է եկել Տեղ գյուղի հատվածում եւ այնտեղ ամրաշինական աշխատանքներ է անում:

«Հայաստան» խմբակցության պատգամավորներ Աննա Գրիգորյանը, Արթուր Սարգսյանը, Արթուր Խաչատրյանը եւ Գեղամ Մանուկյանը վերջերս են վերադարձել Սյունիքից. պատգամավորները եղել են նաեւ Տեղ գյուղում:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում պատգամավոր Գեղամ Մանուկյանը մանրամասներ է ներկայացրել՝ ինչ իրավիճակ էր Տեղ գյուղում:

-Պարոն Մանուկյան, Դուք վերջերս եք վերադարձել Տեղ գյուղից, ի՞նչ կպատմեք ականատեսի աչքերով, ի՞նչ էր կատարվում այնտեղ:

-Թշնամին բավականին առաջ է եկել Տեղ գյուղում. պաշտոնական այն տվյալները, թե որոշ հատվածներում 150-300մ են առաջ եկել, ուղղակի կես ճշմարտություն է. անզեն աչքով էլ տեսանելի է, որ թշնամին ոչ միայն առաջ է եկել, այլ նաեւ գերիշխող դիրքեր է զբաղեցրել, ինտենսիվ ինժեներական աշխատանքներ է տանում: ԱԱԾ-ն հաղորդագրություն էր տարածել, թե արմատական համաձայնություններ կան կողմերի միջեւ, բայց մինչեւ երեկ գիշեր արմատական համաձայնության կամ առաջընթացի ամենախայտառակ փաստն այն էր, որ ոստիկանական մեր հենակետը Տեղ գյուղից ավելի ներքեւ, որտեղ տնակներ կան, ամբողջը հանվել են. դա էլ են զիջել: Մի քանի անհանգստացնող փաստ կա. երբ ասում են՝ համաձայնություն կա, ի՞նչ համաձայնություն է դա՝ գրավո՞ր, թե՞ ինչպես շատ հաճախ է եղել, բանավոր համաձայնություններով թշնամին ավելի առաջխաղացում է ունեցել: Երկրորդ՝ հստակ էր, որ ապրիլի 1-ից Կոռնիձորի ճանապարհը պետք է պատրաստ լինի. ի՞նչ անվտանգային քայլեր են իրականացվել, որպեսզի թշնամական առաջխաղացումը թույլ չտային: Ի վերջո, շվեյցարացի ոստիկաններ չէին այնտեղ կանգնած, այլ Հայաստանի սուվերեն տարածքը վերջին երեք տարին քայլ-քայլ օկուպացնող թշնամին. ստացվում է՝ անվտանգային երաշխիքները չեն գործել: Ի վերջո, ինչի՞ հիման վրա են սահման գծում, սահմանազատման հարցերով զբաղվող միջպետական հանձնաժողովը դեռ աշխատանք չի ծավալել, մի քանի հանդիպումներ են եղել փոխվարչապետների, այսինքն՝ ուղղակի մեկ-երկու պաշտոնյայի որոշման հիման վրա՞ են Հայաստանի սահմանները գծվում: Ես հիշում եմ, որ դեռեւս Դիմադրության շարժման պայքարի օրերին զգուշացնում էինք, որ Տեղի բնակիչները զրկվելու են իրենց արոտավայրերից, այդպես էլ եղավ. այսօր մեր շատ հայրենակիցներ ձեռնունայն են, քանի որ թշնամին արոտավայրերը գրավել է:

-Պարոն Մանուկյան զրուցե՞լ եք Տեղի զինվորականների հետ կամ կապ հաստատե՞լ եք մեր ՊՆ-ի հետ՝ հասկանալու՝ ինչ աշխատանքներ են տարվում հակառակորդին ելման դիրքեր ուղարկելու համար:

-Չեռնպահ կմնամ այդ հարցին պատասխանելուց: Պետք է արձանագրեմ, որ հայկական կողմի աշխատանքը համաչափ չէ այն աշխատանքին, որն իրականացնում է Ադրբեջանը: Ավելի խայտառակ փաստ. Տեղ գյուղի մոտ ծանր տեխնիկա է եղել, որը Կոռնիձորի ճանապարհի շինարարությամբ է զբաղվել, իսկ ադրբեջանական առաջխաղացման մեկնարկից հետո ողջ տեխնիկան հանվել է: Չեռնպահ կմնամ շատ հարցեր բարձրաձայնելուց. եւ՛ ՊՆ-ին, եւ՛ ԱԱԾ-ին բազմաթիվ հարցեր ունենք եւ պատրաստվում ենք դիմել:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԼՈՒՐԵՐ

ՆՈՐ ՔՈՎՔԻ «ՊԱՏՎԻՐԱՏՈՒՆ» ԱԼԵՔՍԱՆՅԱՆԸ ՉԷ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Ալեքս Տեքստիլի» պատասխանատու անձինք իրենց մեղավոր են ճանաչել ներկայացված մեղադրանքում, եւ պատճառված վնասը վերականգնելու նպատակով լրացուցիչ հաշվարկված 1.144.765.709 ՀՀ դրամ հարկային պարտավորությունների գումարը փոխանցվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպոզիտ հաշվին: Այսինքն՝ երբ ասվում էր, թե Սամվել Ալեքսանյանն է պատվիրել որ «Նոր Քովք»-ին պատժեն, ճիշտ չէր: ՊԵԿ-ը նաեւ «Ալեքս»-ի հետեւից գնաց:

ԿԱԼԱՆՔ ՉԻ ԴՐՎԻ

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Երեւանի կալանավորված փոխքաղաքապետ Գեւորգ Սիմոնյանի հաշիվների եւ գույքի վրա կալանք չի դրվի: Երեկ դատարանը մերժել է նման որոշում կայացնել:

Հիշեցնենք, որ Սիմոնյանը կալանավորվել է մարտի 12 ին երկու ամսվա ժամկետով՝ կորոնավիրուսի տարածման շրջանում ենթադրյալ չարաշահումների գործով:

Ըստ Հակակոռուպցիոն կոմիտեի՝ ՀՀ առողջապահության նախկին նախարար Գեւորգ Սիմոնյանը, պատասխանատու լինելով պետական ֆինանսավորման բաշխման համար, քավոր-սանիկական կապ ունենալով «Մեդլայն» կլինիկայի տնօրենի հետ, բավարար վերահսկողություն չի իրականացրել, ինչի հետեւանքով Բաբկեն Շահումյանը հափշտակել է շուրջ 120 միլիոն դրամ:

Ըստ իրավապահների՝ պատասխանատուները բուժվողների վերաբերյալ «Մեդլայն կլինիկ»-ի տրամադրած կեղծ տվյալները չեն համադրել բուժառուների փաստացի առողջական վիճակի հետ ու չեն արձանագրել անհամապատասխանությունները:

Գեւորգ Սիմոնյանը չի ընդունում իրեն առաջադրված մեղադրանքը, քանի որ կարծում է, որ քավոր կամ սանիկ լինելու համար չեն կարող իրեն դատապարտել:

ՎԻՐԱԲՈՒՅԺԸ ՊԵՏՔ Է ԱՊՕՐԻՆԻ ՀԱՆՔԵՐ ՀԱՅՏՆԱԲԵՐԻ

2023 թվականի մարտի 27-ին կայացած ՀՀ կառավարության նիստում, Նիկոլ Փաշինյանի հրամանով, ստեղծվել է Ընդերքօգտագործման ապօրինի դեպքերի հայտնաբերման նպատակով միջգերատեսչական աշխատանքային խումբ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ աշխատանքային խմբի ղեկավարը լինելու է ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության ընդերքօգտագործման ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, իսկ այդ կազմում կլինեն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հողերի եւ ընդերքի քաղաքականության ոլորտը համակարգող նախարարի տեղակալը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակից, ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի տեղակալ, ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության ոլորտը համակարգող ղեկավարի տեղակալը եւ այլք: Այսինքն՝ պետական մարմինների տեղակալներից կազմված մի նոր աշխատանքային խումբ է կազմվել այն պայմաններում, երբ Հայաստանում գործում է ՀՀ բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմինը՝ կառավարությանը ենթակա, որը վերահսկողություն եւ օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող պետական մարմին է, օրենքով սահմանված կարգով կիրառում է պատասխանատվության միջոցներ բնապահպանության եւ ընդերքի բնագավառներում՝ հանդես գալով Հայաստանի Հանրապետության անունից: Այդ տեսչության կազմում կա Ընդերքի վերահսկողության վարչություն, որն էլ ունի Ընդերքի շահագործման վերահսկողության բաժին: Հենց այս բաժնի ուղղակի գործառույթն է իրավիճակին տիրապետելը, հանքերի ինքնագործունեությունը կանխելը, ընդերքօգտագործման կանոնների պահպանմանը հետեւելը եւ, ամենակարեւորը, շրջակա միջավայրի պահպանության սուրբ գործը: Ստացվում է, որ ընդերքօգտագործման ապօրինի դեպքերի հայտնաբերման համար նոր մարմին է պետք:

ՁԱՆԳԵԼ ԵՆ «ՀԱՆՐԱՅԻՆ»-ԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ուրբաթ օրը ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վլադիմիր Վարդանյանի եւ «Հայաստան» խմբակցության պատգմավոր Միեր Սահակյանի միջեւ տեղի ունեցած ծեծկռտուքից անմիջապես հետո իշխող ֆրակցիայի ղեկավար Հայկ Կոնջորյանն անմիջապես զանգահարել է Հանրային հեռուստաընկերություն եւ պահանջել, որ լրագրող ուղարկեն ԱԺ՝ միջադեպը լուսաբանելու: Ըստ ՔՊ-ական պատգամավորներից մեզ հասած լուրերի՝ Կոնջորյանն այդ պահին անգամ Ազգային Ժողովում չի եղել, շփոթված զանգահարել է Հ1-ին, փոխանցել է, թե ծեծկռտուք է եղել Արծվիկ Մինասյանի եւ Միեր Սահակյանի միջեւ: Լրագրողները, այդ ինֆորմացիան ստանալով, հասել են ԱԺ ու պարզել, որ իրականում մեկ այլ պատգամավորի՝ Միեր Սահակյանի եւ Վլադիմիր Վարդանյանի միջեւ է եղել վիճաբանությունը: Ստացվում է՝ Կոնջորյանը, անգամ դեպքի մանրամասներին չտիրապետելով, շտապել է Հ1-ից լրագրող «պահանջել»: ՔՊ պատգամավորները մեզ հետ զրույցում դժվարացան ասել՝ Հայկ Կոնջորյանը Հ1-ի լուրերի տնօրենին է արդյոք զանգել ու լրագրող «պահանջել», թե ՔՊ-ական Սիսակ Գաբրիելյանի կնոջը, որը խմբագիր է աշխատում այնտեղ: Ամեն դեպքում, կատարվածի առնչությամբ «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց մեկնաբանություն վերցնել Հայկ Կոնջորյանից, սակայն վերջինս, ինչպես միշտ է անում, չպատասխանեց հեռախոսազանգերին եւ մեր նամակներին: Մենք չկարողացանք պարզել, թե որ իրավունքով է ՔՊ խմբակցության ղեկավարը զանգահարել Հ1, այլ ոչ, օրինակ, Նիկոլ Փաշինյանի ընտանիքին պատկանող «Հայկական ժամանակ»: Մարտի 31-ին՝ Հայաստանի Հան ԱԺ պետահիրավական հարցերի մշտական հանձնաժողովում կայացած նիստի ժամանակ, երբ Վլադիմիր Վարդանյանի գոռալուց, ձեռքով սեղանին հարվածելուց ու ոտքի կանգնելուց հետո դաշնակցական պատգամավորն էլ էր կանգնել, հարվածել ՔՊ-ական Վլադիմիր Վարդանյանի դեմքին, ուշագրավ վիճակ է արձանագրվել: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ երբ Միեր Սահակյանը բռունցքով հարվածել է Վլադիմիր Վարդանյանի դեմքին, վերջինս անմիջապես ընկել է հատակին: Երբ փորձել են նրան բարձրացնել, առաջին անգամ չի ստացվել, Վարդանյանը նորից գետնին է ընկել, ինչպես բոքսի ռինգում. ըստ ամենայնի, մեկ հարվածը նոկաուտի է ենթարկել Վարդանյանին: Վայրկյաններ անց է միայն նա կարողացել ինքնատիրապետումը վերականգնել ու կանգնել ոտքի: Նա շտապել է դեպի դուռը, փորձել գտնել Միեր Սահակյանին, սակայն Սահակյանը արդեն դահլիճում չէր: Սահակյանի հետեւից փորձել են դուրս գալ նաեւ Տրդատ Սարգսյանը, ապա՝ Վիգեն Խաչատրյանը, սակայն չեն հասցրել: «Հայաստան» խմբակցությունից Գեղամ Նազարյանը նրանց ընթացքը խափանել է՝ հորդորելով հանգստանալ: Ինչեւէ, Վլադիմիր Վարդանյանին «Նաիրի» հիվանդանոց է տեղափոխել ՔՊ-ական Ռուստամ Բաքոյանը:

ԱՊՕՐԻՆԻ ԳՈՒՅՔ

2022 թվականի ընթացքում Գլխավոր դատախազության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությունը ստացել է 50 քրեական գործով նյութ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքներով հայտնաբերված տվյալների վերաբերյալ 25 նյութ: Այն կապված է եղել 84 անձի՝ հնարավոր ապօրինի ծագում ունեցող գույքի պատկանելիության վերաբերյալ: 2021 թվականին 23 նյութ էր՝ 105 անձի վերաբերյալ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ 51 ուսումնասիրությամբ հայտնաբերվել է օրենքով նախատեսված 50 մլն դրամը գերազանցող, ենթադրյալ ապօրինի ծագում ունեցող գույք՝65 շարժական եւ ավելի քան 460 անշարժ գույք, շուրջ 100 իրավաբանական անձի մասնակցություն եւ ավելի քան 92 մլրդ դրամ: 2022 թվականի մայիսի 26-ին Երեւան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան է ներկայացվել Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ հայց ՀՀ տրանսպորտի եւ կապի նախկին նախարար Գագիկ Բեգլարյանի վերաբերյալ. այստեղ խոսքը 33 տարածքների եւ 3 մլրդ դրամի մասին է: Սեպտեմբերի 30-ին ներկայացված հայցադիմումը վերաբերել է Դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության նախկին պետ Միհրան Պողոսյանին. այստեղ խոսքը 15 անշարժ գույքի, 2 մլրդ դրամի մասին է:

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՌԱԶՄԱՄԹԵՐՔ

Մարտի 27-ից ապրիլի 3-ն ընկած ժամանակահատվածում ԱԻ պետական ծառայության կենտրոնական ու շրջանային բաժինների ճգնաժամային կառավարման կենտրոններում գրանցվել է 636 զանգ, որից 16-ը՝ տեխնածին, 18-ը կենցաղային բնույթի կանչեր են:

Անցած շաբաթվա ընթացքում փրկարարները կատարել են 4 վերելակի եւ փակված 5 դռան բացում: Առողջական խնդիր ունեցող 3 քաղաքացի փրկարարների օգնությամբ տեղափոխվել է բուժհաստատություն: Բնակչությանը ջուր մատակարարելու նպատակով 3 ելք է կատարվել:

Յոթ օրվա ընթացքում ծառայության հրշեջ փրկարարները կատարել են 4 ելք, որից 3-ը՝ Ստեփանակերտի տարածքում, 1-ը՝ Մարտակերտում: Բոլոր դեպքերով ծառայության հրշեջ փրկարարներն իրականացրել են հրդեհաշիջման եւ համապատասխան կանխարգելիչ գործողություններ: ԱԻ պետական ծառայության սակրավորական խմբերը, «Հումանիտար ականազերծման կենտրոն» հիմնադրամի եւ The Halo Trust ականազերծող կազմակերպության հետ շարունակում են Արցախի տարածքը մաքրել կյանքի համար վտանգ ներկայացնող զենք-զինամթերքից: Հետախուզական աշխատանքների արդյունքում հայտնաբերված զինամթերքը՝ պահեստավորվում, ապա ոչնչացվում է համապատասխան տարածքում: Սակրավորներն արձագանքել են նաեւ բնակիչների կողմից ստացված 6 ահազանգերին, բնակիչների տնամերձ հողամասերում եւ գյուղատնտեսական աշխատանքների համար նախատեսված հողատարածքներում չեզոքացրել վտանգը: Ընդհանուր առմամբ, հայտնաբերվել է շուրջ 137 միավոր տարբեր տեսակի ու տրամաչափի ռազմամթերք:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

ԵՄ ԿԱՐԵՎՈՐ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի սեպտեմբերին Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի ագրեսիայից անմիջապես հետո Եվրամիության դիտորդների գործուղումը Հայաստան-Ադրբեջան միջազգային սահմանի հայկական կողմ եւ հետագայում ԵՄ երկարաժամկետ քաղաքացիական մշտադիտարկման առաքելության տեղակայումը հանդիսանում է ԵՄ կարեւոր ներգրավվածություն մեր տարածաշրջանում. այս մասին երեկ Բուխարեստում հայտարարել է Հայաստանի արտգործնախարար Արարատ Միրզոյանը:

«Մենք գնահատում ենք Ռումինիայի արժեքավոր ներդրումը ԵՄ համապատասխան քննարկումներում», - ՀՀ ԱԳՆ լրատվական վարչության փոխանցմամբ՝ ասել է Միրզոյանը ռումինացի գործընկեր Բոգդան Աուրեսկուի հետ համատեղ ասուլիսի ժամանակ: Նախարարների հանդիպմանը հաջորդած ասուլիսում Միրզոյանը հայտնել է, որ անդրադարձել են Հարավային Կովկասում վերջին զարգացումներին:

«Ես ներկայացրի գործընկերոջս այն գոյաբանական մարտահրավերները, որոնք սպառնում են եւ՛ Հայաստանի Հանրապետությանը, եւ՛ Լեռնային Ղարաբաղի ժողովրդին: Ցավոք, Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքների ու անվտանգության հարցերը հասցեագրելու վերաբերյալ միջազգային հանրության կոչերին Ադրբեջանը պատասխանում է 2022թ. դեկտեմբերից ի վեր Լաչինի միջանցքի արգելափակմամբ, ահաբեկումներով, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հայությանն իրենց տները հարկադրաբար լքելուն դրդող այլ գործողություններով ու էթնիկ զտումների համակարգված քաղաքականությամբ»:

Միջազգային կառույցների թիրախային կոչերի եւ պահանջների շարքում Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարն ընդգծել է Ադրբեջանի դեմ Արդարադատության միջազգային դատարանի՝ փետրվարի 22-ի իրավաբանական պարտադիր ուժ ունեցող որոշումը:

«Լաչինի միջանցքի ապօրինի արգելափակումը 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության միակ բացահայտ խախտումը չէ: Չկա հայտարարության գրեթե մի դրույթ, որը խախտված չլինի Ադրբեջանի կողմից: Հայ ռազմագերիներին շարունակաբար պատանդառության մեջ պահելու, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքով արտատարածքային միջանցքի պահանջների հետ մեկտեղ, Ադրբեջանը չի ապահովում «ներքին տեղահանված անձանց եւ փախստականների վերադարձը Լեռնային Ղարաբաղի տարածք եւ հարակից շրջաններ՝ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի վերահսկողության ներքո»:

Նա նաեւ շարունակել է. «Ավելին՝ Ադրբեջանը շարունակում է ամենաբարձր մակարդակով հնչեցնել իր ատելության խոսքը եւ ռազմատենչ հռետորաբանությունը, ինչպես նաեւ տեղում համակարգված ագրեսիվ գործողություններ իրականացնել եւ օկուպացված պահել Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի շուրջ 150 քկմ»:

«Մենք կարծում ենք, որ մեր գործընկերները, միջազգային հանրությունը կարեւոր դերակատարում ունեն, որը հնարավոր է իրականացնել՝ օգտագործելով համապատասխան գործիքներն ու մեխանիզմները, այդ թվում՝ միջազգային փաստահավաք առաքելություն ուղարկելով Լաչինի միջանցք եւ Լեռնային Ղարաբաղ», - հայտարարել է նախարարը:

«Հայաստանը բազմիցս հայտարարել է Ադրբեջանի հետ կառուցողական երկխոսություն վարելու իր պատրաստակամության մասին ատելության խոսքից, նախապայմաններից եւ ռազմատենչ հռետորաբանությունից զերծ միջավայրում՝ հանուն Հարավային Կովկասում կայուն խաղաղության եւ անվտանգության հաստատման: Հայաստանն ունի ամուր քաղաքական կամք տարածաշրջանում խաղաղության եւ կայունության հասնելու համար, եւ չնայած բոլոր դժվարություններին՝ մենք բարեխղճորեն շարունակում ենք բանակցություններն Ադրբեջանի հետ», - ասել է Արարատ Միրզոյանը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԴՌՆԵՐԸ «ՓԱԿ ԵՆ» ՆՐԱ ՀԱՄԱՐ

Անկարայում ԱՄՆ դեսպան Ջեֆ Ֆլեյքը այլեւս չի կարողանա այցելել թուրք պաշտոնյաներին. մայիսի 14-ի ընտրություններում միասնական ընդդիմության թեկնածու Քեմալ Քըլըչդարօղլուի հետ հանդիպումից հետո դռները «փակ են» նրա համար: Այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Թուրք առաջնորդը զարմացել է, թե ինչպես դիվանագետը «չի ամաչում» մասնակցել նման միջոցառումների, իսկ հետո խնդրել հանդիպում իր հետ:

«Մեր դռները փակ են նրա առջեւ, նա այլեւս չի կարողանա ներս մտնել: Ինչո՞ւ: Թող նա իմանա իր տեղը»,- ասել է Էրդողանը՝հավելելով, որ Ֆլեյքը պետք է պարզի, թե ինչպես պետք է աշխատի դեսպանը:

Հիշեցնենք՝ Թուրքիայում նախագահական եւ խորհրդարանական ընտրությունները նախանշված են մայիսի 14-ին: Մարտի 30-ին Թուրքիայի Գերագույն ընտրական խորհուրդը ներկայացրել է նախագահի 4 թեկնածուների վերջնական ցուցակը: Նույն օրը երեկոյան ընտրարշավը պաշտոնապես մեկնարկել է:

Հիմնական մրցակիցներ են համարվում Էրդողանն ու Քըլըչդարօղլուն:

ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՆԱՄԱԿԱՆԻՇԵՐ

2023 թվականի ապրիլի 3-ին շրջանառության մեջ են դրվում երկու նամականիշ՝ նվիրված «Հայաստան- Ռումինիա համատեղ թողարկում» թեմային: Փոստային նամականիշերից յուրաքանչյուրն ունի 400 ՀՀ դրամ անվանական արժեք: Նամականիշերից մեկի վրա պատկերված է հայկական ծագումով ռումինացի հայտնի բժիշկ, գիտնական, աշխարհում առաջին ծերաբուժության ինստիտուտի հիմնադիր, «Հերովիտալ» առաջին հակատարիքային միջոցի ստեղծող Աննա Ասլանի դիմանկարը, իսկ մյուս նամականիշի վրա պատկերված է Աննա Ասլանի լուսանկարը եւ բողբոջած ճյուղը՝ նոր կյանքի խորհրդանիշը: Նամականիշերի վրա նաեւ պատկերված են Հայաստանի եւ Ռումինիայի դրոշները, Աննա Ասլանի ստորագրությունը, ինչպես նաեւ «ԱՆՆԱ ԱՍԼԱՆ», «ՀԱՄԱՏԵՂ ԹՈՂԱՐԿՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ-ՌՈՒՄԻՆԻԱ» եւ «1897-1988» գրառումները՝հայերեն եւ անգլերեն լեզուներով:

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ՎԱՇԻՆԳՏՈՆ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝փոխվարչապետ Միհր Գրիգորյանն ապրիլի 7-15 կգործուղվի ԱՄՆ՝Վաշինգտոն:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ փոխվարչապետն ԱՄՆ-ում կմասնակցի Համաշխարհային բանկի խմբի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի գարնանային հանդիպումներին:

Փոխվարչապետի գործուղման ճանապարհածախսի, օրապահիկի եւ գիշերավարձի ծախսերը կկատարվեն ՀՀ վարչապետի աշխատակազմի պահպանման ծախսերում արտասահմանյան գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

450 ԴՈԼԱՐ ԿԱՇԱՌՔ

ՍՏԱԺԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՂԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինչական կոմիտեի Արագածոտնի մարզային ֆինչական վարչությունում ավարտվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության Արագածի տարածքային բաժնում տեղի ունեցած առերեւույթ կոռուպցիոն հանցագործության դեպքի առթիվ 2021թ. ապրիլի 12-ին նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալներով՝ հիմնավորվել է, որ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության Արագածի տարածքային բաժնի պետի պաշտոնը զբաղեցրած Հ.Տ.-ն բաժնի ավագ մասնագետից ընդունել է մարզի մի բնակչուհու աշխատանքային ստաժը վերահաշվարկելու, նրան նշանակված կենսաթոշակի վերահաշվարկման եւ դրա տեսակը աշխատանքային հաշմանդամության կենսաթոշակի փոխելու առաջարկը: Այնուհետեւ բաժնի պետի եւ աշխատակցի կողմից քաղաքացու վերաբերյալ կազմվել եւ հանձնվել են ավել աշխատանքային ստաժի վերաբերյալ կեղծ տեղեկություններ պարունակող փաստաթղթեր: Դրա համար, նախնական համաձայնությամբ, 2021թ. մարտի 30-ին բաժնի պետի աշխատասենյակում հիշյալ ավագ մասնագետը Արագածոտնի մարզի բնակչուհու ամուսնուց՝ 57-ամյա տղամարդուց, ստացել է առնվազն 5.000 ՀՀ դրամ կաշառք, որի մի մասը նույն օրը փոխանցել է պետին:

Բացի այդ, վերոնշյալ բաժնի նախկին պետը նույն մարզի 46-ամյա բնակչի միջնորդությամբ ընդունել է իրեն կաշառք տալու վերաբերյալ Արագածոտնի մարզի 37-ամյա բնակչի առաջարկը: 2021թ. ապրիլի 7-ին վերջինիս բարեկամուհու տվյալներով 10 տարվա աշխատանքային ստաժի վերաբերյալ կեղծ տեղեկություններ պարունակող աշխատանքային գրքույկ կազմելու եւ հանձնելու համար իր աշխատասենյակում իրենց ընդհանուր ծանոթի՝ հիշյալ 46-ամյա տղամարդու ներկայությամբ 37-ամյա բնակչից պահանջել է 450 ԱՄՆ դոլար կաշառք՝ խոստանալով աշխատանքային գրքույկը կազմել եւ հանձնել մեկ շաբաթից տասը օրվա ընթացքում:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության Արագածի տարածքային բաժնի պետին մեղադրանք է ներկայացվել մի խումբ պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ) եւ կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին թողտվության կամ հովանավորչության կամ այլ ապօրինի գործողության կամ անգործության համար կաշառք ստանալու համար (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-ին կետ):

Նույն բաժնի ավագ մասնագետին մեղադրանք է ներկայացվել խմբի կազմում պաշտոնատար անձանց կողմից կաշառք ստանալու համար:

Արագածոտնի մարզի 57 եւ 37-ամյա բնակիչներին մեղադրանք է ներկայացվել կաշառք տալու (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ 46-ամյա տղամարդուն՝ կաշառքի միջնորդության համար (ՀՀ գործող քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մաս):

Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նախաքննությունն ավարտվել է: Քրեական վարույթի նյութերն ուղարկվել են հսկողություն իրականացնող դատախազին՝ 5 անձի վերաբերյալ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ գործը դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐԿԱՅԻՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ներկայացնում է 2023 թվականի մարտի 16-ից 31-ն ընկած ժամանակահատվածում ՊԵԿ հետաքննության եւ օպերատիվ հետախուզության վարչության իրականացրած հարկային իրավախախտումների կանխման, խափանման եւ բացահայտման ուղղությամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները:

22 դեպքով արձանագրվել են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ընդհանուր 4,398,587 ՀՀ դրամի ՀՀ հարկային օրենսգրքի պահանջների խախտումով ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքեր: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 22.000.000 ՀՀ դրամ: Ներկայացվում են առանց համապատասխան հաշվարկային փաստաթղթեր դուրս գրելու ապրանքների տեղափոխման կամ մատակարարման դեպքերը:

6 դեպքով կազմվել են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու վերաբերյալ արձանագրություններ. ապօրինի ձեռնարկատիրական եկամտի չափը կազմել է 11,281,480 ՀՀ դրամ: Հնարավոր տուգանքի գումարը կազմում է 5,970,740 ՀՀ դրամ: Ներկայացվում են ապօրինի ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու դեպքերը:

2 դեպքով արձանագրվել են լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու խախտումներ: Արձանագրված խախտումների գումարը կազմում է 34.100.000 ՀՀ դրամ: Ներկայացվում է լիցենզավորման կամ ծանուցման ենթակա գործունեությունն առանց լիցենզիայի կամ առանց ծանուցման իրականացնելու կամ առանց թույլտվության կամ առանց լիցենզիայի ընդերքը կամ բնական պաշարներն օգտագործելու դեպք:

ԿԻՆԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Ապրիլի 1-ին՝ ժամը 06:50-ին, Երեւանի Գարեգին Նժդեհի եւ Ֆրունզեի փողոցների խաչմերուկում իրար են բախվել «Մերսեդես» եւ «Ռենո» մակնիշի ավտոմեքենաներ: Վարորդները եւ «Ռենոյի» երեք ուղեւորները մարմնական վնասվածքներով տեղափոխվել են հիվանդանոց, որտեղ «Ռենոյի» 48-ամյա ուղեւորուհի Հասմիկ Սարգսյանը մահացել է: Կատարվում է նախաքննություն:

ԼՈՒՐԵՐ

ՎՃԻՌՆԵՐ՝ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայությունը մշակել եւ շահագործման է հանձնել արբիտրաժային վճիռներն էլեկտրոնային եղանակով հարկադիր կատարման ներկայացնելու փաստաթղթաշրջանառության հարթակը:

Հարկադիր կատարումն ապահովող ծառայությունից հայտնում են, որ այն հնարավորություն է տալիս գործող արբիտրաժային դատարանների վճիռներն էլեկտրոնային եղանակով ներկայացնել հարկադիր կատարման: Արդյունքում կատարողական վարույթ հարուցելու, պարտապանի գույքի նկատմամբ հետախուզում հայտարարելու, արգելանքներ կիրառելու եւ բռնագանձում տարածելու գործողություններն այսուհետ չեն իրականացվի դատարանների կողմից տրվող կատարողական թերթերի հիման վրա, այլ կիրականացվեն արբիտրաժային դատարանների կողմից էլեկտրոնային տարբերակով ուղարկված վճիռների հիման վրա ինքնաշխատ եղանակով հարկադիր կատարողի կողմից կատարողական վարույթ հարուցելուց հետո:

Վերոնշյալ վճիռներն այսուհետ չեն մուտքագրվի ծառայության ընդհանուր բաժին, կվերանա դրանց հաշվառման անհրաժեշտությունը, քանի որ ի սկզբանե դրանք համակարգում հասանելի են դառնում էլեկտրոնային եղանակով:

Արդեն իսկ ստացվել են արբիտրաժային դատարանների վճիռները, որոնց հիման վրա հարուցվել են կատարողական վարույթներ:

Հարթակի գործարկմամբ բարձրացվել է նաեւ վճիռների կատարման արդունավետությունը, զգալիորեն կրճատվել է արբիտրաժային դատարանների վճիռների հիման վրա հարուցվող կատարողական վարույթների կատարմանը հատկացվող ժամանակը: Այս հարթակի գործարկումը միտված է նաեւ թեթեւացնելու առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական գործեր քննող դատարանների ծանրաբեռվածությունը:

ԿԱՆ ՏՈՒԺԱԾՆԵՐ

Ապրիլի 3-ին՝ ժամը 01:03-ին, Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոն ահազանգ է ստացվել, որ Երեւանի Նվեր Սաֆարյան փողոցում գտնվող գերեզմանատան մոտակայքում տեղի է ունեցել ՃՏՊ, ավտոմեքենան կողաշրջվել է, անհրաժեշտ է փրկարարների օգնությունը:

Պարզվել է, որ Նվեր Սաֆարյան եւ Մարշալ Խուդյակով 4-րդ նրբանցքի խաչմերուկում բախվել են Mitsubishi Pajero եւ Volkswagen Golf (վարորդ՝ Ա. Բ.) մակնիշների ավտոմեքենաները:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը Mitsubishi Pajero մակնիշի ավտոմեքենայի վարորդը եւ ուղեւորը հոսպիտալացվել են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ:

Փրկարարները հոսանքազրկել են Mitsubishi Pajero մակնիշի ավտոմեքենան եւ փակել են գազի բալոնի փականը:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 31-ից ապրիլի 3-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 130 դեպք, որոնցից 9-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՎՃԱՐՈՒՄ Է ԲՅՈՒՋԵԻՑ

2006 թ.-ին հայ-վրացական սահմանագծում՝ Նոյեմբերյանի տարածաշրջանի Դեղձավան գյուղի վարչական հողերից 50 հեկտար հողատարածք մնացել է փշալարից անդին: Այդ 50 հեկտարից 5,2 հեկտարը Դեղձավան գյուղի 19 բնակիչների սեփականությունն է, 4,4 հեկտարը համայնքային սեփականություն հանդիսացող վարելահող է,մոտ 40,4 հեկտարը՝համայնքային սեփականության արոտավայրեր: Ցանկապատված հատվածի աջ եւ ձախ կողմերում առաջացել է 15 մետր լայնությամբ սահմանային շերտ, որը որոշ հատվածներում կիսել է դեղձավանցի հողի սեփականատերերի հողատարածքները եւ գործնականում անհնար դարձրել հողերի մշակման աշխատանքները: Այդ չմշակվող հողերի համար ոչ հողի սեփականատերերը, ոչ էլ համայնքը դրամական փոխհատուցում չեն ստացել, այդ հողերը համայնքի հաշվեկշռից դուրս չեն գրվել: Դեղձավան բնակավայրի վարչական ղեկավար Յուրի Հովհաննիսյանը հայտնեց, որ 2006-ից մինչեւ 2008թ. նշված հողատարածքների եւ այլ հողերի հարկերի պարտքերը 2012թ.-ին ընդունված «Գույքահարկի եւ հողի հարկի գծով առաջացած ապառքների մասին» օրենքով ներվեցին: Դեղձավանի վարչական ղեկավար Յուրի Հովհաննիսյանի բացատրագրի հիման վրա՝ Նոյեմբերյան խոշոր համայնքի ավագանին, Դեղձավանի վերոհիշյալ հողերի սեփականատեր, հարկային արտոնություն ստացած 19 բնակիչների փոխարեն, 2022 եւ 2023 թթ. համար հաշվարկված հողի հարկը՝ յուրաքանչյուր տարի 33 հազար 557 դրամ, վճարել է Նոյեմբերյան խոշոր համայնքի բյուջեից: Դեղձավանի համայնքապետարանը 2006-2012թթ. դիմել է Տավուշի մարզպետարան, ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն, ԱԱԾ, որպեսզի այդ հողերի հարցին լուծում տրվի: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը Դեղձավանի համայնքապետարանին առաջարկել է գյուղի համարժեք հողերով փոխհատուցել այդ հողերի սեփականատերերին: Յուրի Հովհաննիսյանը նույնպես սեփական հողամաս ունի նշված սահմանային հատվածում: Նա հայտնեց, որ Դեղձավանը համարժեք հողամասեր չունի, համայնքի պահուստային հողատարածքները կամ ավելի ցածրարժեք են՝ ոռոգելի չեն, կամ էլ 25 տարի ժամկետով վարձակալությամբ են տրված: Դեղձավանի համայնքապետարանը ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությանը առաջարկել է այդ 50 հեկտար տարածքը հանրային գերակա շահ ճանաչել եւ դրա դիմաց փոխհատուցել Դեղձավանի բնակիչներին: Նախարարությունից պատասխանել են, որ այդ հողատարածքները պատկանում են Հայաստանի Հանրապետությանը, գյուղացիներին կարող են անցագրով անցնել փաստացի սահմանը եւ մշակել իրենց հողերը, սակայն Դեղձավանի բնակիչներն ասում են, որ չեն կարող անցնել իրենց հողով ձգվող փշալարը եւ 15 մետր լայնությամբ ճանապարհը, որին մոտենալ չի թույլատրվում: Վերոհիշյալ 50 հեկտարից ավելի քան 40 հեկտարը արոտավայր է, որից զրկվել է սակավահող Դեղձավան գյուղը: Եթե տարիներ առաջ Դեղձավանի բնակիչները շուրջ 200 խոշոր եղջերավոր անասուն էին պահում, արոտավայրի պակասության պատճառով այժմ շուրջ 40 գլուխ են պահում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐ

15-Ը ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿՀԱՆՁՆՎԵՆ

Ապրիլի 12-15-ը նախատեսվում է շահագործել 67 համարի երթուղին, որը կսպասարկվի փոքր դասի ավտոբուսներով եւ միմյանց կկապի Շենգավիթ եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանները (սկիզբը՝ Ներքին Չարբախ, վերջնակետը՝ «Աստղիկ» բժշկական կենտրոն): Երթուղին կանցնի նոր կառուցված Շիրակ-Քաբաջանյան կամուրջով: Այս մասին երեկ՝ ապրիլի 3-ին՝ Երեւանի քաղաքապետարանում գործակարգավարական հերթական խորհրդակցության ժամանակ, ասաց քաղաքապետարանի աշխատակազմի տրանսպորտի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար Հայկ Սարգսյանը:

Վերջինս նշեց, որ նախատեսվում է շահագործման հանձնել նաեւ համար 40 երթուղին, որն իրար կկապի Նոր Նորք, Քանաքեռ-Զեյթուն եւ Արաբկիր վարչական շրջանները, համար 1 հիմնական երթուղին՝ բարձր դասի 18 հատ 12-մետրանոց ավտոբուսներով, իրար կկապի Աջափնյակ, Կենտրոն, Արաբկիր, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանները:

Նույն ժամանակահատվածում նախատեսվում է իրականացնել հետեւյալ փոփոխությունները. ««Ժոնգ տոնգ» մակնիշի 18 ավտոբուսներով կսպասարկվեն հ.58 երթուղին, որը նույնպես կունենա ուղեգծի որոշակի փոփոխություն, կանցնի նաեւ գեներալ Նվեր Սաֆարյանի փողոցով, միմյանց կկապի Ավան-Առինջ, Ավան, Արաբկիր, Կենտրոն, Էրեբունի վարչական շրջանները: Թվով 4 նոր շարժակազմով կհամալրվի համար 97 երթուղին, որի վերջնակետը կերկարացվի մինչեւ Նուբարաշեն վարչական շրջան: Համար 22 երթուղու շարժակազմը եւս կհամալրվի, Սիլիկյան թաղամասում կիրականացվի երթուղու փոփոխություն՝ ներառելով Սիլիկյան 5-րդ, 12-րդ եւ 4-րդ փողոցները: Համար 38 երթուղում եւս շարժակազմի փոփոխություն կիրականացվի՝ փոքր դասի ավտոբուսներին կփոխարինեն միջին դասի ավտոբուսները, ինչը որոշակի կբարելավի ներկայի իրավիճակը:

Այսպիսով, մինչեւ ապրիլի 15-ը, ըստ նախատեսվածի, շահագործման կհանձնվեն նոր ներկրված ավտոբուսներից շուրջ 40-ը:

Մայիսի սկզբից նախատեսվում է նոր ավտոբուսներով փոխարինել համար 18 (Սիլիկյան թաղամաս-Վարդաշեն համայնք), համար 13 միկրոավտոբուսային երթուղին, որտեղ կգործարկվեն 12 «Ժոնգ տոնգ» ավտոբուս, համար 47 երթուղին (14 հատ ավտովբուս): Շահագործման կհանձնվի թվով 18 բարձր դասի ավտոբուսներ, որոնք կսպասարկեն համար 9 հիմնական երթուղին: Համար 53 եւ 54 երթուղիները եւս կփոխարինվեն «Ժոնգ տոնգ» ավտոբուսներով՝14-ական հատով: 53 երթուղին Հաղթանակ թաղամասում կունենա երթուղու փոփոխություն: Սարի թաղում 21 համար երթուղում «պազիկների» փոխարեն կմտնեն փոքր դասի ավտոբուսներ»,-ասաց վարչության պետի պաշտոնակատարը:

Ըստ Սարգսյանի՝ ապրիլ, մայիս, հունիս ամիսներին գործող «Ժոնգ տոնգ» ավտոբուսային հ.13, 15, 16, 20, 23, 28, 30 եւ 97 երթուղիներում կիրականացվեն շարժակազմերի համալրում՝ 20-25 ավտոբուսներով:

Մայիսի սկզբից նախատեսվում է շահագործման հանձնել եւս 110 ավտոբուս:

ԼՈՒՐԵՐ

ՎԱՐԺԱՆՔՆԵՐ ԿԻՐԱԿԱՆԱՑՆԵՆ

Հայաստանի հարավային ռազմական օկրուգի (ՀՌՕ) ռազմաբազայի անձնակազմը սկսել է հսկիչ ստուգում անցկացնել ձմեռային ուսումնական շրջանի մշտական տեղակայման կետերում եւ բարձրլեռնային Կամխուդ եւ Ալագյազ զորավարժարաններում. այս մասին հայտնում է ՌԴ հարավային ռազմական օկրուգի մամուլի ծառայությունը:

Առաջին փուլում ստուգվելու են մարտական հերթապահություն իրականացնող ստորաբաժանման զինծառայողների մարտական պատրաստվածության մակարդակը, անձնակազմի օպերատիվ պատրաստվածությունը, սպառազինությունն ու զինտեխնիկան:

Կստուգվեն նաեւ զինծառայողների տեսական գիտելիքները ուղղորդող փաստաթղթերի, կանոնակարգերի, իրավիճակային եւ մարտավարական խնդիրների լուծման անվտանգության պահանջների բնագավառում:

Վերահսկիչ ստուգման հաջորդ փուլում անձնակազմը կկատարի մարտական պատրաստության առաջադրանքներ բարձրլեռնային պայմաններում՝ անվավոր եւ զրահատանկային տեխնիկայի վարման վարժություններ, հրաձգություն բոլոր տեսակի սպառազինություններից, ինչպես նաեւ կհանձնի հատուկ, տեխնիկական, մարտավարական, շարային եւ ֆիզիկական պատրաստության, ռազմական տեղագրության եւ ճառագայթային, քիմիական ու կենսաբանական պաշտպանության նորմատիվներ:

Հարավային ռազմական օկրուգի մարտական հենակետում ուսուցման ձմեռային շրջանի վերահսկողական ստուգումները կիրականացվեն ցերեկային եւ գիշերային ժամերին:

ՓԼՈՒՋՄԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

Հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023թ. ապրիլի 1-ին Երեւան քաղաքի Նար-Դոս փողոցի 2-րդ հասցեում գտնվող «Ալրաղաց» ԲԲ ընկերության տարածքում պահուստարանների քանդման աշխատանքների ընթացքում նշված շինության փլուզման հետեւանքով փլատակներն ընկել են նույն հասցեի հարեւանությամբ գործող խաղալիքների պահեստի, ինչպես նաեւ Երեւանի մետրոպոլիտենի երկաթգծերի վրա, որի հետեւանքով խաղալիքների պահեստի վարձակալը եւ գույքի սեփականատերը կրել են էական վնասներ:

Դեպքի առթիվ ապրիլի 1-ին ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Էրեբունի եւ Նուբարաշեն վարչական շրջանների քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել, որ «Ալրաղաց» ԲԲ ընկերության շահագործման ոչ պիտանի պահուստարանի քանդման աշխատանքներն իրականացվել են Ա/Զ-ի կողմից, որը մինչ այդ «Ալրաղաց» ԲԲԸ-ի հետ կնքված համապատասխան պայմանագրի հիման վրա եւս իրականացրել է բազմաթիվ այլ պահուստարանների քանդում:

Վարույթի շրջանակում կատարվել են հարցաքննություններ, վերցվել են անհրաժեշտ փաստաթղթերը, նշանակվել է դատաշինարարատեխնիկական եւ ապրանքագիտական համալիր փորձաքննություն:

Նախաքննությունը շարունակվում է, քննության առարկա են փլուզման հանգամանքների պարզումը, իրականացված քանդման աշխատանքների՝ անվտանգության եւ շինարարական նորմերին համապատասխանությունը, ինչպես նաեւ աշխատանքների թույլտվության եւ կատարման իրավապայմանագրային պայմանների եւ ժամկետների պահպանվածության հարցը:

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 39 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 55-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

«Կոնվերս բանկ»

ԹԱՐՄԱՑՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾ

Converse Mobile-ի զարգացման ծրագրի շրջանակում «Կոնվերս բանկ»-ը ներկայացրել է նոր՝ թարմացված հավելվածը՝ավելի ֆունկցիոնալ ու գրավիչ ինտերֆեյսով:

Ի՞նչն է փոփոխվել Converse Mobile-ում: Մեր հավելվածի օգտագործումը դարձել է ավելի պարզ, արագ ու հեշտ: Փոփոխությունների արդյունքում հավելվածի գլխավոր էջի վերնամասում տեղադրվել են տեղեկատվական բաներներ, որոնցից մեկ հպումով օգտատերերը անմիջապես հասանելիություն են ստանում հետեւյալ ծառայություններին.

- Snap վարկ,
- Պրոգրես ավանդ,
- հաշվի բացում,
- նոր քարտի ստացում,
- փոխանցում ընկերոջը,
- միջազգային փոխանցում,
- փոխանցում ՀՀ տարածքում,
- փոխանցում քարտին:

Պրոդուկտների ընտրությունը կատարվել է՝ գնահատելով հաճախորդների կարիքներն ու ակնկալիքները, ինչպես նաեւ հաճախորդի վարքագիծն ու տարբեր պրոդուկտների նկատմամբ պահանջարկը: Ի՞նչ է շահելու հաճախորդը: Այս փոփոխության արդյունքում բանկի մոբայլ հավելվածը ֆունկցիոնալ առումով դարձել է ավելի գրավիչ եւ հնարավորություն է տալիս ոչ միայն մեկ հարթակում օգտվել բանկային հիմնական ծառայություններից՝ սկսած փոխանցումներից մինչեւ ավանդ ու վարկավորում, այլեւ՝

- առանց հավելյալ ջանքերի հասանելիություն ստանալ պահանջված գործարքներին,
- հնարավորինս քիչ ժամանակ ծախսել անվտանգ միջավայրում գործարքներ իրականացնելու համար,
- որպես հաճելի բոնուս՝ հավելվածի օգտագործման արդյունքում մասնակցել տարբեր մրցույթների ու արշավների, ստանալ հավելյալ հնարավորություններ, նվերներ եւ այլն:

Սպասե՞լ նորությունների: Իհարկե, Converse Mobile հավելվածի զարգացումը լինելու է շարունակական:

Տեղեկատվական բաներների ցանկը համալրվելու է՝հնարավորություն ընձեռելով արագ հասանելիություն ստանալ ոչ միայն այլ պրոդուկտների, այլեւ մասնակցել բանկի կողմից իրականացվող արշավների ու մրցույթների: Եվ սա ամենը չէ. մեծ անակնկալները առջեւում են:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ԲՈՒՀԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵԼ Է 2022-2023ԹԹ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ապրիլի 15-ից մեկնարկում է 2022-2023 ուսարվա շրջանավարտների պետական ավարտական եւ 2023 թվականի բուհերի ընդունելության համար բուհի եւ մասնագիտության ընտրության եւ ընտրած մասնագիտության համար սահմանված միասնական եւ ներբուհական քննությունների հայտագրման գործընթացը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից հայտնում են, որ պետական ավարտական քննություններին մասնակցելու համար շրջանավարտը մինչեւ ապրիլի 15-ը գրավոր դիմում է իր ուսումնական հաստատության տնօրենին: Ուսումնական հաստատության տնօրենը ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ը պետական ավարտական քննություններ հանձնողների ցուցակ-հայտերը մուտքագրում է Գնահատման եւ թեստավորման կենտրոնի app.dimord.am էլեկտրոնային կայքում:

Շրջանավարտը (դիմորդը) բուհը եւ մասնագիտությունը նշելու եւ նշված մասնագիտության համար սահմանված ընդունելության (միասնական, ներբուհական) քննություն(ներ)ը հանձնելու կամ հանձնած քննություն(ներ)ը մուտքագրելու համար պետք է ունենա ԳԹԿ անձնական համար եւ ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ը առցանց եղանակով Գնահատման եւ թեստավորման կենտրոնի di2ord.a2 կայքէջում լրացնի ընդունելության դիմում-հայտ:

ԳԹԿ անձնական համար ստանալու համար շրջանավարտը (դիմորդը) դիմում է իր ուսումնական հաստատության տնօրենին, իսկ նախորդ տարիների եւ 2022-2023 ուստարվա նախնական եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների շրջանավարտները դիմում են իրենց բնակության վայրի՝ այդ նպատակով առանձնացված ուսումնական հաստատության տնօրենին:

Ուսումնական հաստատության տնօրենը ստուգում է ընդունելության քննություն հայտագրել ցանկացող դիմորդի՝ ՀՀ ֆինանսների նախարարությունում Գնահատման եւ թեստավորման կենտրոնի 900018003401 հաշվեհամարին յուրաքանչյուր քննության համար փոխանցված 1500 (մեկ հազար հինգ հարյուր) դրամ վճարի անդորրագրի առկայությունը կամ վճարից ազատված լինելու փաստաթուղթը եւ տալիս ԳԹԿ անձնական համար: Ընդունելության դիմում-հայտը լրացնելու համար անհրաժեշտ է նաեւ 3x4 չափի լուսանկարի էլեկտրոնային տարբերակը, անձնագրի կամ ծննդյան վկայականի պատճենը:

Միասնական քննությունների վճարից ազատվում են պարտադիր ժամկետային ծառայությունից զորացրված անձինք, 1-ին եւ 2-րդ խմբերի եւ մինչեւ 18 տարեկան մանկուց հաշմանդամները, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների երեխաները, առանց ծնողական խնամքի մնացած մինչեւ 23 տարեկան անձինք:

Վերոգրյալ խմբերին պատկանող անձինք դիմում-հայտին համապատասխանաբար կցում են զինվորական գրքույկի պատճենը, հաշմանդամության տեղեկանքի պատճենը, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ՆԳ նախարարության եւ ՀՀ կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության կողմից տրված տեղեկանքների պատճենները, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի պատճենները:

«ՎՏԲ-Հայաստան» բանկ

ԻՋԵՑՐԵԼ Է ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԻ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԸ

«ՎՏԲ-Հայաստան» բանկի հաճախորդներն այսուհետ կարող են ՌԴ-ից հեռախոսահամարով փոխանցումներ ստանալ կրկնակի իջեցված միջնորդավճարով՝ գործարքի գումարի 0,5%-ի չափով:

Հեռախոսահամարով փոխանցումները հասանելի են Ռուսաստանից դեպի Հայաստան ուղղությամբ: Գործարքն իրականացնելու համար ռուսաստանյան ВТБ Онлайн հավելվածի օգտատիրոջն անհրաժեշտ է անցնել Платежи բաժին եւ ընտրել В другие страны գործողությունը, ապա նշել երկիրը Армения եւ По номеру телефона, այնուհետեւ կոնտակտների ցանկից պետք է ընտրել ստացողի հեռախոսահամարը, նշել գումարը եւ հաստատել փոխանցումը: Մինչ գործարքը հաստատելը ուղարկողը տեսնում է մուտքագրվող գումարը ՀՀ դրամով, ինչպես նաեւ գանձվող միջնորդավճարի չափը: Գումարը մուտքագրվում է հաշվին ակնթարթորեն:

««ՎՏԲ-Հայաստան» բանկը Ռուսաստանի հետ դրամական փոխանցումների առաջատարներից մեկն է: Նախորդ տարվա արդյունքներով՝ բանկի մասնաբաժինը երկրի շուկայում ռուսաստանյան օգտատերերին փոխանցումների քանակով կազմել է 17%, իսկ Ռուսաստանից դեպի Հայաստան փոխանցումների մասնաբաժինը՝ 10%: Անցյալ տարի «ՎՏԲ-Հայաստան» բանկը դարձավ առաջին գործընկեր բանկը, որտեղ «ՎՏԲ»-ն գործարկեց հեռախոսահամարով փոխանցումները: Ռուսաստանից «ՎՏԲ-Հայաստան» բանկ բջջային համարով կատարված փոխանցումների ընդհանուր թիվը վեց ամսվա ընթացքում գերազանցել է 40 հազարը, իսկ փոխանցումների ընդհանուր ծավալը հասնում է ավելի քան 2 մլրդ ՀՀ դրամի»,- նշել է «ՎՏԲ-Հայաստան» բանկի գլխավոր տնօրենի - տնօրինության նախագահի տեղակալի ժ/պ Տարաս Կլադչենկոն:

Դեպի «ՎՏԲ» բջջային համարով փոխանցման օրական առավելագույն գումարը կազմում է 50 հազար ՌԴ ռուբլի, ամսական՝ մինչեւ 300 հազար ՌԴ ռուբլի:

Ծառայության վերաբերյալ մանրամասն տեղեկություններ կարելի է ստանալ «ՎՏԲ-Հայաստան» բանկի պաշտոնական կայքում, բանկի մասնաճյուղերում կամ զանգահարելով Կոնտակտային կենտրոն 8787 հեռախոսահամարով:

«ՎՏԲ-Հայաստան» բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՆՐԱՅԻՆ

ԿԳՄՄՆ-ՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵԼ Է ԲՅՈՒՋԵԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ArmLur.am-ը ՀՀ ԿԳՄՄՆ հասարակայնության հետ կապերի եւ տեղեկատվության վարչությունից տեղեկացավ, որ միջնաժամկետ բյուջետային հայտում առաջարկվում են կրթական մի շարք նոր նախաձեռնություններ: ԿԳՄՄՆ-ում անցկացվել է կրթության ոլորտի 2024-2026 թթ. բյուջետային հայտի եւ միջնաժամկետ ծախսային ծրագրի հանրային քննարկումը: Ոլորտային գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների համար քննարկումը վարել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արաքսյա Սվաջյանը:

Արաքսյա Սվաջյանն անդրադարձել է 2022 թ. ՀՀ Ազգային Ժողովի ընդունած Կրթության՝ մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրի այն կետերին, որոնցով սահմանվել են կրթության ոլորտի զարգացման տեսլականը, վերջնական նպատակը եւ ռազմավարական ուղղությունները եւ ներկայացրել նախանշված հիմնական աշխատանքները: Ռազմավարական նպատակի իրականացման համար սահմանվել են 3 ուղղությունները՝ համընդհանուր ներառական սովորողակենտրոն եւ մասնակցային կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության բարձրացում, կրթական ծառայությունների արտադրանքի միջազգայնացում եւ արտահանում: Նախարարի տեղակալը մանրամասն ներկայացրել է 2024-2026 թվականների ՄԺԾԾ նախագծում նախատեսվող հանրակրթության եւ նախնական ու միջին մասնագիտական կրթության ուղղություններով նոր նախաձեռնությունները: Ըստ նախարարի տեղակալի՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2021-2026 թվականների եւ Կրթության՝ մինչեւ 2030 թ. զարգացման պետական ծրագրերը, 2026 թվականի համար սահմանվել են կրթության զարգացման համար մի շարք կարեւորագույն թիրախներ՝ ապահովել առնվազն 500 մանկապարտեզի եւ 300 դպրոցի կառուցումը, հիմնանորոգումը կամ վերանորոգումը, նախադպրոցական հաստատություններում ընդգրկված 3-5 տարեկան երեխաների թիվը հասցնել առնվազն 85 տոկոսի:

Նախատեսվում է նաեւ ներդնել մանկավարժների աշխատանքային առաջխաղացման, մասնագիտական շարունակական զարգացման եւ վարձատրության փոխկապակցված մեխանիզմներ, հանրապետության բոլոր դպրոցների բոլոր դասարաններում ամբողջական ներդնել հանրակրթության նոր չափորոշիչները, բարելավել կրթության որակը՝ հատկապես ԲՏՃՄ ուղղություններով, եւ այլն: Խոսելով հանրակրթության եւ արտադպրոցական կրթության ծրագրերի մասին՝ մասնավորապես առանձնացրել է «Ապահով դպրոց» եւ «Կրթության որակի ապահովում. ուսուցիչների մասնագիտական զարգացում» ծրագրերը:

Փոխնախարարի խոսքով՝ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակում 2024-2026 թթ. նախատեսվում է ՀՀ Սյունիքի մարզի գյուղական բնակավայրերում կառուցել կրթական որակյալ ծառայությունների հասանելիությունն ապահովող կրթական կենտրոններ: Մյուս կարեւոր ծրագրերից է արվեստի եւ սպայական ավագ դպրոցների ստեղծում՝ առանձնահատուկ եւ արդիական կրթական ծրագրերի ներդրմամբ, նորակառույց ենթակառուցվածքներով եւ գերժամանակակից տեխնիկական միջոցների ապահովմամբ: Ծրագրի հիմնական շահառուները հանրապետության դպրոցների 10-12-րդ դասարանների սովորողներն են: ՄԺԾԾ ծրագրում կարեւորվել է նաեւ «Կրթության որակի ապահովում. ուսուցիչների մասնագիտական զարգացում» ծրագիրը, որի շրջանակում 2024-2026 թթ. համար նախատեսվում է մանկավարժահոգեբանական աջակցության ծառայություններ մատուցող մասնագետների մասնագիտական առաջխաղացման՝ ներառյալ ատեստավորման հնարավորությունների ընդլայնում՝ փոխկապակցելով այն աշխատանքի արժանապատիվ վարձատրության մեխանիզմների եւ մասնագիտական ստանդարտների հետ:

Քննարկվել է նաեւ «Կամավոր ատեստավորման նոր համակարգի ներդրում՝ ուղղված արտադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների որակի բարձրացմանը» նոր նախաձեռնությունը, որի արդյունքում կկարգավորվեն պետական կամ համայնքային ոչ առեւտրային կազմակերպություն հանդիսացող արտադպրոցական ուսումնական հաստատությունում դասավանդող մարզիչ-մանկավարժի, խմբակավարի, դասատուի, ինչպես նաեւ որեւէ արտադպրոցական ուսումնական հաստատությունում չաշխատող եւ մանկավարժական աշխատողի պահանջները բավարարող անձի կամավոր ատեստավորման կազմակերպման, անցկացման եւ այլ հարցեր: Ներկայացվել են նաեւ «Նախնական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական կրթություն» ծրագրի շրջանակում 2024-2026 թթ. համար նախատեսվող նախաձեռնությունները: Այս համատեքստում Արաքսյա Սվաջյանը կարեւորել է ՄԿՈՒ հաստատությունների քարտեզագրմանը, մասնավոր հատվածի հետ համագործակցությանը, աշխատանքի վրա հիմնված ուսուցմանը, ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրմանը, ենթակառուցվածքների, նյութատեխնիկական բազայի ապահովմանը, ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների ատեստավորմանը, տարակարգի շնորհմանը միտված նոր գործընթացները:

Ոլորտային գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները ուղղել են մի շարք հարցեր, որոնց շուրջ ծավալվել է քննարկում: Դրանք վերաբերել են ուսուցիչներ պարտադիր վերապատրաստումներ իրականացնող կազմակերպությունների ֆինանսավորմանը, կոռուպցիոն ռիսկերի բացառմանը, ոլորտի վերահսկմանը, ինչպես նաեւ մասնավորի հատվածի հետ, մասնավորապես՝ կրթություն-աշխատաշուկա սերտ համագործակցությանը: Հնչեցված բոլոր հարցերին տրվել են սպառիչ պատասխաններ, պայմանավորվածություն է ձեռք բերվել հարցերի դեպքում այլ ձեւաչափով եւս քննարկումներ անցկացնել 2024-2026 թթ. բյուջետային հայտի եւ միջնաժամկետ ծախսային ծրագրի վերաբերյալ:

ԼՈՒՐԵՐ

ԿԾԱՂԿԻ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ

4 տարում առաջին անգամ Նյու Յորքի բուսաբանական այգում կծաղկի հսկայական դիածաղիկը: Այն հայտնի է նաեւ որպես Ամորֆոֆալուս տիտանական, կարող է հասնել 12 ֆուտի (ավելի քան 3,6 մետր) եւ ծաղկել 7-10 տարի (ծաղկումը տեւում է 24-36 ժամ):

Սա հազվադեպ տեսարան կլինի Նյու Յորքի բնակիչների համար, որոնք կցանկանան զգալ նրա զզվելի բույրը. այն փտող մսի հոտ ունի:

Բուսաբանական այգին կազմակերպել է ուղիղ հեռարձակում, որպեսզի ծաղիկների սիրահարներն ամբողջ աշխարհում կարողանան հետեւել այդ տեսարանին՝ սպեցիֆիկ «բույրը» չզգալով:

Բուսաբանական այգու ներկայացուցչի խոսքով՝ ծաղիկն իր հզոր գարշահոտությամբ գրավում է փոշոտող միջատներին, որոնք սնվում են մեռած կենդանիներով:

Տարիներ են անհրաժեշտ, որպեսզի ծաղիկն իր կոկոնը ձեւավորի, բայց հենց դա տեղի է ունենում, ծաղիկներն անհավանական արագությամբ են բացվում:

Ամորֆոֆալուս տիտանականը Նյու Յորքի բուսաբանական այգում ծաղկել է 2016, 2018 եւ 2019թթ.:

ՆՎԱՃԵԼ ԵՆ 7 ՈՍԿԵ ՄԵԴԱԼ

Էստոնիայի մայրաքաղաք Տալլինում անցկացված հունահռոմեական ոճի ըմբշամարտի միջազգային մրցաշարում Հայաստանի ներկայացուցիչներ Կարեն Ասլանյանը (72 կգ) եւ Դավիթ Օվասապյանը (130 կգ) դարձել են հաղթող. հաղորդում է ՀԸՖ-ի մամուլի ծառայությունը:

Պատանեկան մրցաշարի ոսկե մեդալակիրներ են դարձել Յուրի Մխիթարյանը (45 կգ), Լիպարիտ Մկրտչյանը (48 կգ), Սամվել Տերտերյանը (60կգ), Պետրոս Աշկարյանը (65 կգ) եւ Գրիշա Ոսկանյանը (92 կգ):

Արծաթե մեդալներ են նվաճել Աբգար Պետրոսյանը, Հայկ Քալաջյանը (60կգ) եւ Գոռ Խաչատրյանը (71կգ):

Բրոնզե մեդալներ են նվաճել Յուրիկ Կարապետյանը (55 կգ), Արթուր Ամոյանը (65 կգ) եւ Էրիկ Տեր-Մաթեւոսյանը (80 կգ):

«ԿՅԱՆՔՍ»

ՀԱՅՏՆԻՆԵՐԸ՝ ԱՂԱՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ՍՏԵՆԴԱՓԻՆ

Ապրիլի 1-ին կայացավ սիրված դերասան, հումորիստ Աղաս Մանուկյանի «Կյանքս» ստենդափը:

Բացի դերասանի երկրպագուներից, դահլիճում էին նաեւ նրա ընկերները՝ Գրիգոր Դանիելյանը, Գարիկ Սեփխանյանը, Ժաննա Բուտուլյանը, Ռաֆայել Երանոսյանը, Լեւոն Հարությունյանը, Արմեն Վարդանյանը, Անիտա Ավանեսյանը, Դիաննա Գրիգորյանը եւ այլք:

Աղաս Մանուկյանը «Կյանքս» ստենդափով ներկայացնում է իր կյանքը՝ վերածելով այն հումորի: Նա անդրադառնում է մանկությունից մինչեւ մեր օրերը, բոլոր հումորները հիմնված են իրական պատմությունների վրա, այսպիսով դերասանը կրեատիվ ձեւով պատմում է իր պատմությունն ու իր անցած ուղին: Նշենք, որ «Կյանքս» ստենդափի առաջին պրեմիերան տեղի է ունեցել մարտի 15-ին եւ 16-ին:

● *Ապրիլի 5-ին «Մեցցո» ակումբում տեղի կունենա By The Way համերգային փառատոնը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 21:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ինչպես են հաշվարկվում խնամատար ընտանիքին երեխային պահելու համար տրվող ամսական դրամական միջոցները:

Ամալիա Միրզոյան (42 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ խնամատարության բոլոր տեսակների համար յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության համար տրամադրվող միջոցների ամսական չափը կազմում է տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով մեկ երեխայի խնամքի համար մանկատներում նախատեսված գումարի չափ: Ընդհանուր տիպի խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրության ամսական չափը կազմում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի չափով:

Մասնագիտացված խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց տրվող վարձատրության ամսական չափը կազմում է «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածով սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի եւ 30 տոկոս հավելավճարի չափով:

Ճգնաժամային եւ արձակուրդային խնամատար ընտանիքներում խնամվող յուրաքանչյուր երեխայի խնամքի եւ դաստիարակության դիմաց վճարումն իրականացվում է երեխայի փաստացի խնամված օրերի թվով՝ համաձայն պարզ հաշվարկի՝ ամսական աշխատավարձն ամսական միջին օրերի (30.4) վրա բաժանելու հաշվարկով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Յուրաքանչյուր հաջորդ երեխայի համար խնամատար ծնողը ստանում է 100 տոկոս աշխատավարձ եւ խնամքի եւ դաստիարակության համար տրվող գումար:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ուզում եմ իմանալ՝ որքան ժամանակ է վարկային տեղեկատվությունը պահպանվում տվյալների բազայում:

Տիգրանուհի Հայրապետյան (37 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ վարկային բյուրոն չպետք է ներառի վարկային զեկույցում վարկային տեղեկատվության սուբյեկտի վերաբերյալ վարկային զեկույցի տրամադրման պահին նախորդող հինգ տարուց ավելի վարկային տեղեկատվություն: Հինգ տարին ավարտվելուց հետո նշված տեղեկատվությունը արխիվացվում է (ըստ «Վարկային տեղեկատվության շրջանառության եւ վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետի 2-րդ ենթակետի):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վարկային տեղեկատվությունը կամ «վարկային պատմությունը» Ձեր (վարկառուի) վերաբերյալ վարկային տեղեկատվությունն է, որը բնութագրում է Ձեր կողմից ստանձնած վարկային պարտավորությունների մասով պարտքերը, վճարումները, վճարումների սովորությունները կամ պարտավորությունների կամ դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվություններ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Իսրայելում

Իսրայելի Պետախ Տիկվա քաղաքի Հանրային այգին պաշտոնապես վերանվանվել է աշխարհահռչակ հայազգի շանսոնյե Շառլ Ազնավուրի անունով: Այգին Ազնավուրի անունով վերանվանելու որոշումը միաձայն ընդունել էր քաղաքային խորհուրդը՝ քաղաքապետ Ռամի Գրինպերկի գլխավորությամբ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 1 + 2 - 12 + 16
Կոտայքի լեռներ	- 0 + 2 + 11 + 15
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 + 15 + 18
Գեղարքունիք	- 3 + 2 + 9 + 12
Լոռի	+ 2 + 7 + 13 + 17
Տավուշ	+ 4 + 8 + 16 + 19
Արագածոտնի լեռներ	- 2 + 2 + 10 + 13
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 16 + 20

Արարատ	+ 6 + 9 + 19 + 22
Արմավիր	+ 4 + 8 + 19 + 21
Վայոց ձորի լեռներ	- 2 + 1 + 8 + 11
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 8 + 19 + 22
Սյունիքի հովիտներ	+ 6 + 10 + 18 + 23
Սյունիքի նախալեռներ	+ 2 + 5 + 13 + 18
Արցախ	+ 5 + 10 + 18 + 23
Երեւան	+ 4 + 6 + 18 + 20

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **3.04.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*